ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Բացատրագիր

Հանրակրթական դպրոցում աշխարհագրության ուսուցման անհրաժեշտությունը պայմանավորված է գիտության այդ ճյուղի աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական, գործնական նշանակությամբ, սովորողների հայրենասիրական և բնապահպանական դաստիարակության, մտածողության որոշակի մակարդակի ձևավորման գործում նրա ունեցած կարևորությամբ: Առարկայի չափորոշչի մշակման համար գլխավոր փաստաթուղթ են հանդիսացել «Հանրակրթության պետական կրթակարգը», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի պետական կրթական չափորոշիչը (նախագիծ), «Հանրակրթության պետական չափորոշիչը», «Աշխարհագրություն» «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների ծրագրերը: Աշխարհագրության չափորոշիչը սույն բացատրագրի հետ մեկտեղ ներառում են՝

- *աշխարհագրության հայեցակարգը*, որում ներկայացված են այն հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ նշանակություն ունեն կրթության բովանդակության մեջ աշխարհագրության գործառույթները որոշելու և կրթության կազմակերպմանն անհրաժեշտ նյութերը՝ չափորոշիչները, ծրագրերը, ուսումնական և ուսումնամեթոդական գրականությունը մշակելու համար,
- *հանրակրթական աշխարհագրության ուսումնական նպատակներն* ըստ կրթական աստիճանների (տարրական և հիմնական դպրոցների համար),
- *աշխարհագրության առարկայախմբի յուրաքանչյուր առարկայի բովանդակային պարտադիր միջուկը* (հենքային բովանդակությունը) տարրական և հիմնական դպրոցների համար՝ ըստ բովանդակային հիմնական գծերի,
- *սովորողների պատրաստվածությանը* (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) *ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները* ըստ կրթական աստիճանների (տարրական և հիմնական դպրոցների համար), ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները

ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ խմբերով, որոնք համապատասխանում են՝ Ա- նվազագույն, Բ-միջին, Գ- բարձր պատրաստվածությանը,

- *գրականության ցանկ:*

Հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է և պատշաճ տեղ է գրավում ուսումնական ծրագրերում:

«Աշխարհագրություն» դպրոցական առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել նվազագույն աշխարհագրական և քարտեզագրական մշակույթ, որն անհրաժեշտ է լիարժեք քաղաքացու համար՝ անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից:

Դպրոցական աշխարհագրությունն ունի կրթական և դաստիարակչական բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ:

Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ: Գործ ունենալով ինչպես բնական պայմանների, այնպես էլ հասարակական օբյեկտների ու երևույթների հետ՝ աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարակագիտական գիտությունների շփման հատվածում, սերտորեն փոխկապված է դրանց հետ:

Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք:

Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորություններին, նյութական ու հոգևոր մշակույթին:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ:

Դրանցից առավել կարևորներն են՝

1. յուրահատուկ միջազգային լեզվի՝ աշխարհագրական քարտեզից օգտվելու, ինչպես նաև պարզունակ քարտեզ-սխեմայի (տեղանքի հատակագծի) կազմման կարողություն,

2. տարբեր երկրներում ու միջազգային ասպարեզում առկա բնական և հասարակական երևույթների մասին բազմապիսի աղբյուրներից ստացվող տեղեկատվության ամբողջացման ու համակարգման կարողություն,

3. տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու կարողություն,

4. ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու կարողություն:

5. Աշխարհագրական տեղեկատվական համակարգից(GIS) և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու տարրական կարողություն:

Այդ ամենի հետ մեկտեղ աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որը նախնական պատկերացում է տալիս նաև աշխարհագրական գիտությանը հարակից մի շարք գիտությունների հիմունքների մասին, որոնց հատուկ ուսումնասիրությունը ինքնուրույն առարկայի ձևով չի մտնում հանրակրթության բովանդակության մեջ: Դրանք են՝ Երկրի մասին գիտությունները, մասնավորապես երկրաբանությունը և երկրաֆիզիկան, իսկ հասարակական գիտություններից՝ տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և ժողովրդագրությունը:

Դպրոցական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից է սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորումը: Վերջինիս հիմքը համակարգային տարածական մոտեցումն է՝ իր տարբեր մակարդակներով՝ համամոլորակային, տարածաշրջանային և տեղական (լոկալ) կամ հայրենագիտական:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիու-

թյունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Ուսումնասիրվող աշխարհագրական օբյեկտների և երևույթների փոխազդեցություններն ու զարգացումները բացահայտվում են հակադրությունների միասնության ու պայքարի, քանակական փոփոխություններից որակականին անցնելու, բացասման բացասման օրենքների հիման վրա: Դպրոցական յուրաքանչյուր դասընթաց յուրովի է բացահայտում աշխարհայացքային այդ գաղափարները՝ ելնելով իր առանձնահատուկ բովանդակությունից: Հետազոտության իրենց առարկաներից (նեղ իմաստով՝ օբյեկտներից) ելնելով, և բնական (ֆիզիկական), և հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխահագրությունը ունի գիտական աշխարհայացք ձևավորելու, քանի որ դրանք ընդգրկում են բնական և հասարական երևույթների լայն շրջանակ, իսկ գլխավորը՝ տալիս են բնական միջավայրի և հասարակության միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կապերը տեսնելու, սովորելու և հասկանալու հնարավորություններ:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչները առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ:

Գիտական աշխարհայացքի ձևավորումն արդյունավետ իրականացնելու համար պետք է նկատի ունենալ դրա մանկավարժահոգեբանական օրինաչափությունները (սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները), դպրոցական աշխահագրության կրթադաստիարակչական խնդիրները:

Աշխարհագրության միջոցով տնտեսության, դրա ճյուղերի ուսումնասիրումը աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատան-

քային տարբեր գործունեության ոլորտներին, զանազան մասնագիտություններին, ինչը հնարավորություն է տալիս դպրոցականներին որոշելու սեփական հետաքրքրությունները՝ աշխատանքային գործունեության ընտրության ժամանակ:

Մեծ է դպրոցական աշխարհագրության դերը սովորողների բարոյագեղագիտական արժեքների ձևավորման գործում: Վերջինս հատուկ կարևորվել է հանրակրթության արդի բարեփոխման ռազմավարական խնդիրներում: Աշխարհագրական-հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչնդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը և առողջությունը, միաժամանակ, զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ: Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրության, մարդասիրության, համակեցության, փոխադարձ հարգանքի, իրար օգնելու մարդկային բարձրարժեք գծեր, ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ:

Դպրոցական աշխարհագրությունն իր ուրույն դերն է կատարում սովորողների այնպիսի ունակությունների զարգացման գործում, ինչպիսիք են դիտողունակությունը, երևակայությունը, տրամաբանությունը, խոսքը, հիշողությունը:

Դպրոցականների տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին մի կողմից երևույթները տեսնել համալիր ձևով, մյուս կողմից, դրանք նպաստում են նրանց դիտողունակության զարգացմանը: Այդ առումով առանձնապես արժեքավոր են երկարատև դիտարկումները, որոնք շրջակա բնությունը և մարդու տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավորություն են տալիս համապատասխան հետևություններ կատարել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական

ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ:

Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներ են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով, առանձին տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը համապատասխան քարտեզներով և նկարներով:

Քարտեզների միջոցով տարբեր տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը, ինչպես նաև ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարումը սովորողների մոտ զարգացնում են տրամաբանական մտածողության այնպիսի կողմեր, ինչպիսիք են ապացուցելիությունը, դատողության հատկությունը, ճիշտ մտահանգումներ կատարելու կարողությունները:

Տեղից-տեղ աշխարհագրական տարբերությունների բացահայտման համար աշակերտները կիրառում են մտավոր գործունեության այնպիսի հնարներ, ինչպիսիք են համեմատությունը, համադրությունը, երևույթների և օբյեկտների դասակարգումը:

Մտածողության զարգացումը սերտորեն կապված է աշակերտի խոսքի զարգացման հետ:

Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների, թվերի ու փաստերի հետ՝ զարգանում է աշակերտների հիշողությունը:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է ճանաչի իր հայրենիքը, թվարկի նրա խոշոր քաղաքները, լճերը, գետերը, լեռները, իմանա իր բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները, տարրական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության և իր կյանքում բնական երևույթների դերի մասին, տարրական գիտելիքներ ունենա քարտեզի՝ աշխարհագրության երկրորդ լեզվի, մասշտաբի մասին:

Նա աշխարհագրական գիտելիքների հիման վրա կարող է ձեռք բերել հետևյալ կարողություններն ու հմտությունները. դիտարկել և նկարագրել բնու-

թյան մեջ կատարվող պարբերական փոփոխությունները (տարվա եղանակներ, գիշեր-ցերեկ), օգտվել որոշակի սարքերից, շրջապատում պարզագույն օրինաչափություններ նկատել և դրանց հիման վրա եզրահանգումներ անել, համագործակցել համադասարանցիների հետ, համատեղ մշակել և իրականացնել բնապահպանական պարզ միջոցառումներ, օգտվել պարզագույն հասկացություններից:

Տարրական դպրոցն ավարտողը ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ պետք է սիրի բնությունը, գնահատի բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք ունենա կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ (արժեքային համակարգ):

Միջին դպրոցն ավարտողը պետք է ճանաչի Երկիր մոլորակի աշխարհագրական թաղանթի հիմնական օրինաչափությունները, այնտեղ ընթացող բնական երևույթների պատճառները, փոխառնչությունները, գիտելիքներ ունենա երկրագնդի աշխարհագրական թաղանթի հիմնական բաղադրիչների, դրանց փոխպայմանավորվածության, զարգացման և տարածքային օրինաչափությունների մասին, ճանաչի մարդ-բնություն կապը, գիտելիքներ ունենա օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցության մասին, ճանաչի Հայաստանի բնությունը և նրա յուրահատկությունները:

Նա պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ բնության մեջ դիտարկել, նկարագրել, համեմատել, դասակարգել երևույթները և եզրակացություններ անել, կատարել չափումներ, արդյունքները գրանցել աղյուսակների, դիագրամների, քարտեզ-սխեմաների տեսքով, տալ մեկնաբանություններ, եզրահանգումներ կատարել բնության տարբեր երևույթների մասին՝ հիմնվելով փաստերի, հասկացությունների, օրինաչափությունների և օրենքների վրա, բնության առանձին երևույթների մասին կարծիք հայտնելու և այն փաստերով հիմնավորելու համար ճիշտ օգտագործել տերմինները, բնական գիտություններին (նաև աշխարհագրությանը) հատուկ տերմինները, հասկա-

ցությունները, տարբերակել բնապահպանական հիմնախնդիրները, տեսնել դրանց դրսևորումները Հայաստանում, լինել բնական միջավայրի պահպանողն ու բարելավողը:

Միջին դպրոցն ավարտողը պետք է գիտակցի բնական պաշարների սահմանափակությունը, մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը, գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը բնական միջավայրի պահպանման գործում:

«Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառում պետական չափորոշիչով նախատեսված գիտելիքներից հարկ է առանձնացել աշխարհագրական բովանդակությամբ գիտելիքների հետևյալ շրջանակը: Տարրական դպրոցն ավարտողը պետք է ընդհանուր գծերով ճանաչի իր հայրենիքը, նախնական գիտելիքներ ունենա մարդու, հասարակության և բնական միջավայրի, բնական և հասարակական երևույթները պարզունակ գծագրերի, սխեմաների և քարտեզների միջոցով ներկայացնելու մասին, իմանա Հայաստանի և նրա հարևան պետությունների տեղը քարտեզի վրա, պատկերացում ունենա մարդկանց միջև հավասարություն, արդարություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության մասին:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ հասկանալ, որ մարդը բնության և հասարակության մասնիկն է, զանազանել մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային, ռասայական, ազգային, կրոնական, աշխատանքային տարբերությունները, օգտվել քարտեզից, զանազանել հասարակության և շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության տարբեր աղբյուրները և օգտվել դրանցից, բանավոր և գրավոր խոսքում համարժեք օգտագործել հասարակության մասին մատչելի հասկացություններ, ինքնուրույն օգտվել դպրոցական բառարանից և մանկական հանրագիտարաններից՝ հասարակության վերաբերյալ նոր գիտելիքներ ստանալու նպատակով:

Միջին դպրոցն ավարտողը պետք է գաղափար ունենա հասարակական և բնական երևույթների փոխազդեցության և փոխպայմանավորվածության, աշխարհի միասնականության և բազմազանության վերաբերյալ, ամբողջական գիտելիքներ ունենա համաշխարհային տնտեսության, դրա կառուցվածքի, զարգացման նախադրյալների, արդի հիմնախնդիրների, աշխարհի ժողովրդագրական պատկերի, քաղաքական բաժանման մասին, իմանա Հայաստանի ժողովրդագրական ժամանակակից պատկերը, տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը:

Նա պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ վերլուծել, համեմատել, ընդհանրացնել, վերացարկել և համադրել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող իրադարձությունները, երևույթները և փաստերը, ազգային շահերի տեսանկյունից վերլուծել և գնահատել Հայաստանի ազգային, տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ուղղվածությունը, տարբեր սկզբնաղբյուրներից տեղեկատվություն ընտրել, վերլուծել և եզրակացություններ անել, հասկանալ և գնահատել իր հասարակական դերը, որպես որոշակի ժամանակաշրջանում և որոշակի տարածության մեջ ապրող մարդ ունենա գործունեության տարրական կարողություններ, բերել ինքնուրույն փաստարկներ, ապացույցներ և հիմնավորումներ սեփական տեսակետներն արտահայտելու համար, դրսևորել տրամաբանական և ստեղծագործական ճկուն մտածելակերպ:

Միջին դպրոցն ավարտողը պետք է՝ ունենա ազգային ինքագիտակցություն, կարևորի պետականության դերը հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում, կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը, ընդունի ժողովուրդների, կրոնների, մարդկանց և նրանց ապրելակերպի միջև գոյություն ունեցող տարբերությունները և հարգալից վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների մշակույթների հանդեպ, գիտակցի

կրթվելու, ամբողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու կարևությունը (արժեքային համակարգ):

«Աշխարհագրություն», Հայաստանի աշխարհագրություն առարկաների նոր բովանդակությունը կառուցված է դպրոցի եռաստիճան նոր համակարգի հաշվառումով: Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում աշխարհագրական գիտելիքները ներկայացված են «Ես և շրջակա աշխարհը» Հանրակրթության պետական չափորոշչի «Բնական և հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառների ինտեգրված դասընթացում, 5-6-րդ դասարաններում՝ «Բնագիտություն», 5-րդ դասարանում՝ «Հայրենագիտություն» ինտեգրված դասընթացներում:

7-րդ դասարանում աշխարհագրությունը ներկայացված է «Հասարակական աշխարհագրություն. Աշխարհ», 8-րդ դասարանում՝ «Հասարակական աշխարհագրություն. Տարածաշրջաններ», 9-րդ դասարանում՝ «Հայաստանի աշխարհագրություն» դասընթացներով:

Այսպիսով, աշխարհագրությունը 12-ամյա հիմնական դպրոցում կունենա հետևյալ կառուցվածքը և ժամաքանակը.

6-րդ դասարան - «Աշխարհագրություն: Մայրցամաքներ,օվկիանոսներ.... .....1 ժամ

7-րդ դասարան - «Հասարակական աշխարհագրություն.Աշխարհ».....1 ժամ

8-րդ դասարան- «Հասարակական աշխարհագրություն. Տարածաշրջաններ».....2 ժամ

9-րդ դասարան- «Հայաստանի աշխարհագրություն»..... 2 ժամ

10-րդ դասարան (ընդհանուր հոսք)-«Ընդհանուր աշխարհագրություն»..... 2 ժամ

11-րդ դասարան (ընդհանուր հոսք)-«Ընդհանուր աշխարհագրություն»……1 ժամ

12-րդ դասարան (ընդհանուր հոսք) - «Ընդհանուր աշխարհագրություն»……1 ժամ

Ուսումնական գործունեության տեսակները

Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում, մոդելների, քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում, տեղանքի դիտարկում, ուսումնասիրում, էքսուրսիաների անցկացում, նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում, ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում, չափողական, գործնական և փորձնական աշխատանքների կատարում, գրաֆիկական և քարտեզագրական աշխատանքների կատարում, հիմնահարցերի հետազոտում, աշխարհագրական խնդիրների և վարժությունների կատարում, ստեղծագործական աշխատանքների կատարում, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում, խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում, իրավիճակների և արդյունքների վերլուծում, հաշվետվությունների պատրաստում, գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում, բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների, ստուգարքների անցկացում, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծարգրերի օգտագործում, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6-րդ դասարան

Բովանդակային միջուկ

(հիմնական դպրոց)

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ: ՄԱՅՐՑԱՄԱՔՆԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐ

Աշխարհագրական թաղանթ: Մարդն աշխարհագրական թաղանթում

Աշխարհագրական թաղանթ, կառուցվածքը, հատկանիշները, զարգացումը: Պլատֆորմներ և գեոսինկլինալներ: Կլիմայական գոտիներ: Աշխարհագրական գոտիականություն, զոնայականություն: Մարդու ազդեցությունը լանդշաֆտների վրա, մարդածին լանդշաֆտներ:

Մայրցամաքներ, օվկիանոսներ

Ի՞նչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկանոսների աշխարհագրությունը: Մայցամաքներ, աշխարհամասեր, օվկիանոսներ:

Մայրցամաքներ (մայրցամաքների աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ կառուցվածքով)՝

Մայրցամաքների աշխարհագրական դիրքը, ափագիծը: Երկրաբանական կառուց-վածքը: Մակերևույթը: Կլիման, կլիմայական գոտիները: Ներքին ջրերը: Բնական զոնաները: Հողաբուսական ծածկույթը: Կենդանական աշխարհը:

Օվկիանոսներ (օվկիանոսների աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ կառուցվածքով)՝

Օվկիանոսների աշխարհագրական դիրքը, ափագիծը: Բնական պայմանները, ջրա-բանական ռեժիմը: Հարստությունները. կենդանական և բուսական աշխարհը:

Հիմնական դպրոց **Սովորողների ներկայացվող պահանջները** **Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**		
Ա խումբ **պարտադիր նվազագույն մակարդակ**	**Բ խումբ** **միջին մակարդակ** **(ավելանում են Ա խմբի պահանջներին)**	**Գ խումբ** **առավելագույն մակարդակ** **(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)**
Իմանա մայրցամաք, աշխարհամաս, օվկիանոս հասկացությունները, մայրցամաքի բնութագրման սխեման՝ աշխարհագրական դիրքը, մեծությունը, մայրցամաքի ափագծի տարրերը և դրանց դիրքը քարտեզի վրա, մակերևույթը, կլիման, կլիմայական գոտիները, գետերը, լճերը, բնական զոնաները, խոշոր պետությունները, դրանց մայրաքաղաքները : Օվկիանոսների դիրքը, ափագիծը, խոշոր ծովերը, ծովային հոսանքները, ջրի ջերմաստիճանի և աղիության հիմնական ցուցանիշները, օրգանական աշխարհի տարածված ներկայացուցիչները: ***Գաղափար ունենա*** աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքի, աշխարհագրական թաղանթի տարածքային միավորների (աշխարհագրական գոտի, բնական զոնա,	***Իմանա երկրի վրա*** ջերմության և խոնավության տեղաբախշման օրինաչափությունները : Կլիմայի և ռելիեֆի դերը բնական համալիրների ձևավորման գործում, բնական համալիրների հերթափոխման օրինաչափությունը հասարակածից բևեռներ, լեռների ստորոտներից գագաթները, օվկիանոսների ափերից մայրցամաքների խորքը շարժվելջս: Մայրցամաքի աշխարհագրական դիրքի ազդեցությունը նրա բնության վրա: Մակերևույթի կառուցվածքի հիմնական գծերը, մայրցամաքի կլիման ձևավորող գործոնները, մայրցամաքի բնության վրա մարդու գործունեության ազդեցության օրինակներ: Օվկիանոսների դերը մարդու տնտեսական	***Իմանա*** աշխարհագրական թաղանթի գլխավոր հատկանիշները: ***Կարողանա բացահայտել*** իր տեղանքի բնատարածքային համալիրի յուրահատկությունը և դրա պատճառները, ***հետազոտել*** իր տեղանքի բնական համալիրը, մայրցամաքների և օվկիանոսների բնության բազմազանության պատճառները, օդային զանգվածների տեղաշարժերի պատճառները տարվա ընթացքում, ***համեմատել*** մայրցամաքների բնության բաղադրիչները և բնական համալիրները, ***վերլուծել*** բնական զոնաների և վերընթաց գոտիների առաջացման պատճառները, տարածման օրինաչափությունները և առանձնահատկությունները տար-

վերընթաց գոտի) մասին: ***Կարողանա թվարկել, քարտեզի վրա ցույց տալ և ուրվագծային քարտեզի վրա մակագրել*** մայրցամաքները, աշխարհամասերը, խոշոր թերակղզիները,կղզիները, մայրցամաքների հայտնի լեռները և ընդարձակ հարթավայրերը, մայրցամաքների խոշոր գետերն ու լճերը, նշանավոր պետությունները: Օդային զանգվածների հիմնական տիպերը, աշխարհագրական, կլիմայական գոտիները, բնական զոնաները, օվկիանոսները, դրանց մաս կազմող խոշոր ծովերը, ծոցերը, նեղուցները:	գործունեության մեջ,: ***Կարողանա բնութագրել*** մայրցամաքի կլիմայականան գոտիները, կլիմայի տիպերը, բնական զոնաները, ***օգտվել*** մայրցամաքի աշխարհագրական բնութագրի տիպային պլանից, թեմատիկ քարտեզներից, աղյուսակներից, դիագրամներից, ***քարտեզով ներկայացնել*** մայրցամաքի աշխարհագրական դիրքը. ***սահմանել*** աշխարհագրական թաղանթ, աշխարհագրական (կլիմայական) գոտի(ներ), բնական զոնա հասկացությունները, ***բնորոշել*** բնական և մարդածին լանդշաֆտները, աշխարհագրական թաղանթի կառուցվածքայնությունը, կլիմայական գոտիների և բնական զոնաների առանձնացման սկզբունքները, դրանց տարածման աշխարհագրական առանձնահատկությունները տարբեր մայրցամաքներում:	բեր մայրցամաքներում, ուսումնական խնդրից կախված՝ ***ընտրել*** անհրաժեշտ բովանդակության քարտեզներ, կլիմայական քարտեզներով, գրաֆիկներով, դիագրամներով ***որոշել*** մայրցամաքի կլիմայի հիմնական գծերը:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ներկայացվող պահանջները արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Աշխարհագրության «Աշխարհագրական թաղանթ»: Մայրցամաքներ, օվկիանոսներ» դասընթացի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխադարձ կապերի կարևորությունը որպես նրա ամբողջականության հիմնարար պայման,
- գիտակցի մայրցամաքների և օվկիանոսների բազմազանությունը որպես երկրագնդի հարստություն,
- գիտակցի երկրագնդի բնության պահպանության և այդ առումով քաղաքացիական դիրքորոշման անհրաժեշտությունը,
- գնահատի մայրցամաքների և օվկիանոսների բնության տարրերի էկոլոգիական և գեղագիտական արժեքը,
- գիտակցի տարբեր մայրցամաքների բնակչության կյանքի պայմանների բազմազանության, կենցաղի և մշակույթի տարբերությունների՝ որպես մարդկային հասարակության համընդհանուր հարստության դերը,
- արժևորի մայրցամաքների և օվկիանոսների բնական պայմանների ու ռեսուրսների նշանակությունը, դրանց ռացիոնալ օգտագործման և պահպանության անհրաժեշտությունը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրություն

(բովանդակային միջուկ)

7-8-րդ դասարաններ

Մարդոլորտ: Մարդոլորտը և հասարակական աշխարհագրությունը: Աշխարհի քաղաքական բաժանումը: Պետությունների խմբավորումը ըստ տարածքի մեծության, բնակչության թվի, աշխարհագրական դիրքի, պետական կարգի, կառավարման ձևի, վարչատարածքային կառուցվածքի, զարգացման մակարդակի:

Աշխարհի բնակչության թիվը և շարժը: Բնակչության շարժը: Բնակչության վերարտադրությունը: Բնակչության մեխանիկական շարժ (միգրացիա, գաղթ):

Աշխարհի բնակչության կազմը. սեռային, տարիքային, ռասայական, լեզվական, ազգային (էթնիկական), կրոնական: Բնակչության տեղաբաշխումը:

Բնական պայմաններ և ռեսուրսներ:

Գաղափար տնտեսության մասին: Համաշխարհային տնտեսություն: Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը: Արտադրական ոլորտի ճյուղերը: Տնտեսության տարածքային տարբերությունները: Աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում:

Արդյունաբերությունը, նրա գլխավոր ճյուղերի զարգացումը և տեղաբաշխումը: Գյուղատնտեսությունը, նրա գլխավոր ճյուղերի զարգացումը և տեղաբաշխումը: Տրանսպորտ, նրա գլխավոր տեսակները: Տնտեսության սպասարկման ոլորտը, նրա գլխավոր ճյուղերը:

Միջազգային կազմակերպություններ:

Պետությունների տնտեսական միավորումները:

Աշխարհի տարածաշրջանները և պետությունները

«Աշխարհի տարածաշրջանները և պետությունները» բովանդակային ուղղության շրջանակում ներառված են աշխարհամասերի (բացառությամբ Անտարկտիկա աշխարհամասի) 13 տարածաշրջան և 14 պետություն:

Տարածաշրջանի աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ սխեմայով.

- Աշխարհագրական դիրքը, սահմանները:
- Կազմը և քաղաքական քարտեզը, տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները:
- Բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը:
- Բնակչությունը, թիվը, շարժը, կազմը, տեղաբաշխման պատկերը:
- Տարածաշրջանի տնտեսության ընդհանուր գծերը, առանձնահատկությունները, տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
- Տարածաշրջանի հատկանշական հիմնախնդիրները:

Պետության աշխարհագրական բնութագիրը տրվում է հետևյալ սխեմայով.

- Աշխարհագրական դիրքը, սահմանները, չափերը, պետական կարգը, վարչա-տարածքային բաժանումը,
- Բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, դրանց տնտեսական նշանակությունը,
- Բնակչությունը, բնակչության թիվը, բնական և մեխանիկական շարժերը, բնակչության կազմը, տեղաբաշխումը, ուրբանիզացիան, աշխատանքային ռեսուրսները,
- Տնտեսությունը. տնտեսության գլխավոր ճյուղերի բնութագիրը, երկրի արտաքին տնտեսական կապերը,
- Տնտեսության տարածքային կազմակերպումը:

ԵՎՐԱՍԻԱ

Եվրոպա

- Արևելյան Եվրոպա: Ռուսաստանի Դաշնություն:
- Հարավային Եվրոպա: Իտալիա:
- Արևմտյան Եվրոպա: Գերմանիա: Ֆրանսիա: Մեծ Բրիտանիա
- Հյուսիսային Եվրոպա

Ասիա

- Կենտրոնական Ասիա
- Հարավ-Արևմտյան Ասիա: Վրաստան: Ադրբեջան: Թուրքիա: Իրան
- Հարավային Ասիա: Հնդկաստան:
- Հարավ-Արևելյան Ասիա:
- Արևելյան Ասիա: Չինաստան: Ճապոնիա

ԱՖՐԻԿԱ

- Աֆրիկա: Հարավաֆրիկյան Հանրապետություն:

ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ

- Ավստրալիա: Օվկիանիա

ԱՄԵՐԻԿԱ

- Հյուսիսային Ամերիկա: ԱՄՆ:
- Լատինական Ամերիկա:

Հիմնական դպրոց **Սովորողներին ներկայացվող պահանջները** **Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**		
Ա խումբ **պարտադիր նվազագույն մակարդակ**	**Բ խումբ** **միջին մակարդակ** **(ավելանում են Ա խմբի պահանջներին)**	**Գ խումբ** **առավելագույն մակարդակ** **(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)**
Գաղափար ունենա պետության վարչատարածքային կառուցվածքի մասին: ***Իմանա*** երկրների կառավարման և պետական-տարածքային կառուցվածքի հիմնական ձևերը, պետությունների խմբավորման և դասակարգման սկզբունքները: ***Կարողանա թվարկել*** աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը, քարտեզի վրա ***ցույց տալ*** խոշորագույն պետությունները և դրանց մայրաքաղաքները:	***Իմանա*** հասարակական աշխարհագրություն, քաղաքական քարտեզ հասկացությունները: Պետությունների խմբավորումն ու դասակարգումը ըստ տարածքի, բնակչության թվի, աշխարհագրական դիրքի, կառավարման ձևի, պետական-տարածքային կառուցվածքի, տնտեսական և քաղաքական դերի, ***իմանա*** Հայաստանի Հանրապետության տեղը պետությունների դասակարգման շարքում: ***Կարողանա բացատրել*** աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխման պատճառները, պետության տարածքի վարչական և վարչաքաղաքական բաժանման հիմնական նպատակներն ու խնդիրները:	***Իմանա*** աշխարհի քաղաքական քարտեզի ժամանակակից փոփոխությունների հիմնական միտումները, ***կարողանա տալ*** աշխարհի առանձին երկրների և տարածաշրջանների քաղաքաաշխարհագրական դիրքի գնահատականը, օգտվելով ՏՀՏ-ներից ***վերլուծել*** տեքստային, քարտեզագրական և վիճակագրական նյութերը:
Իմանա բնական ռեսուրսների տեսակները: ***Գաղափար ունենա*** երկրագնդի բնական ռե-	***Իմանա*** բնական ռեսուրս, ռեուրսապահովվածություն, բնական պայման հասկացություն-	***Իմանա*** բնական ռեսուրսների տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները: Օգտվելով

սուրսների տարածման հիմնական շրջանների մասին: ***Կարողանա*** օրինակներով ***թվարկել*** և քարտեզի վրա ցույց տալ օգտակար հանածոների կարևորագույն տեսակներն ու հանքավայրերը:	ները, բնական ռեսուրսների տարածման գլխավոր շրջանները: ***Կարողանա բացատրել*** մարդու տնտեսական գործունեության վրա բնական պայմանների ազդեցության դրական և բացասական հետևանքները, ***դասակարգել*** բնական ռեսուրսները ըստ ծագման, ըստ սպառելիության:	բնական ռեսուրսների վերաբերյալ տեքստային, աղյուսակային, քարտեզագրական տվյալներից ***կարողանա կազմել*** աշխարհում տարբեր բնական ռեսուրսների շահագործման չափերի վերաբերյալ դիագրամներ և գրաֆիկներ, կազմի և լուծի ռեսուրսապահովվածության վերաբերյալ խնդիրներ:
Իմանա աշխարհի բնակչության թիվը, տարեկան աճի ցուցանիշը, ժամանակակից միգրացիաների հիմնական ուղղությունները և պատճառները, բնակչության կազմի ցուցանիշները (տարատեսակները): ***Գաղափար ունենա*** բնակչության վերարտադրության ցուցանիշների և ռեժիմների մասին: ***Ծանոթ լինի*** աշխարհի խոշորագույն և Հայաստանի հարևան երկրների բնակչության սեռային, տարիքային, ռասայական, էթնիկական, կրոնական կազմին, աշխարհի բնակչության տեղաբաշխմանը : ***Կարողանա թվարկել*** և քարտեզի վրա ***ցույց տալ*** աշխարհի խոշո-	***Իմանա*** բնակչություն, բնակչության վերարտադրութուն, բնական աճ, մեխանիկական աճ, միգրացիա (նաև դրա տեսակները), ժողովրդագրական քաղաքականություն, բնակչության կազմ, էթնոս, ռասա, աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես ակտիվ բնակչություն, բնակչության տեղաբաշխում, բնակչության միջին խտություն, բնակչության տարաբնակեցում հասկացությունները բնակչության վերարտադրության տիպերն ու ռեժիմները, վերարտադրության տարբեր տիպի երկրների օրինակներ, աշխարհի խոշոր լեզվաընտանիքները, լեզվախմբերը, լեզուները,	***Իմանա*** երկրագնդի վրա բնակչության ամենամեծ կուտակման արեալների ձևավորման պատճառները, ժողովրդագրական և միգրացիոն քաղաքականության բովանդակությունը: ***Կարողանա բացատրել*** միգրացիոն գործընթացների ազդեցությունն առանձին տարածքների բնակչության թվի, կազմի վրա, ***վերլուծել*** տեքստային, քարտեզագրական և վիճակագրական նյութերը՝ աշխարհի տարբեր տարածաշրջանների բնակչության վերարտադրության և կազմի տարբերությունների բացահայտման նպատակով, ***կառուցել*** բնակչությանը և տնտեսությանը վերաբերող դիա-

րագույն քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները, օգտվելով համապատասխան պայմանական նշաններից, քարտեզների վրա ***տարբերել*** քաղաքներն ըստ մարդաշատության և ըստ գործառույթների, աշխարհի աշխարհի խիտ և նոսր բնակեցված, անմարդաբնակ շրջանները, օգտվել բնակչության թվի գրաֆիկներից և վիճակագրական աղյուսակներից, գյուղական տարաբնակեցման հիմնական ձևերին:	ռասաները, համաշխարհային կրոնները, դրանց տարածման արեալները, բնակչության միգրացիայի պատճառները, երկրագնդի վրա բնակչության ամենամեծ կուտակման արեալները, ***կարողանա հաշվարկել*** ժողովրդագրական առանձին ցուցանիշները. միջին խտություն, բնական աճ, ***բացատրել*** բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոնները, ***դասակարգել*** քաղաքներն ըստ մարդաշատության և գործառույթների:	գրամներ, գրաֆիկներ, քարտեզասխեմաներ:
Գաղափար ունենա տնտեսության, ազգային տնտեսության, համաշխարհային տնտեսության, նյութական և ոչ նյութական արտադրական ոլորտների, տնտեսության ճյուղերի մասին: ***Ծանոթ լինի*** արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ճյուղային կազմին, միջազգային կազմակերպություններին, ցանկացած տարածքի (տարածաշրջան, պետություն) աշխարհագրական բնութագրման տիպային պլանին: ***Իմանա*** ուսումնասիրվող տարածաշրջանի կազմը, սահմանները, աշխարհագրական դիրքը: ***Ծանոթ լինի*** տարա-	***Իմանա*** տնտեսաշխարհագրական դիրք, տնտեսություն, ազգային տնտեսություն, համաշխարհային տնտեսություն, տնտեսության ճյուղ, աշխատանքի աշխարհագրական բաժանում, աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանում, ագրոարդյունաբերական համալիր, համախառն ներքին արդյունք, առևտրական հաշվեկշիռ, պայմանական վառելիք, բերքատվություն, մթերատվություն, համախառն բերք, տրանսպորտային հանգույց, մերձքաղաքային տնտեսություն, մելիորացիա, արտադրողականություն հասկացությունները,	***Իմանա*** ազատ տնտեսական գոտի, ԳՏՀ, երկրի զարգացման մակարդակ հասկացությունները, գյուղատնտեսության մասնագիտացման նախադրյալները, տրանսպորտի դերը համաշխարհային տնտեսության մեջ, ուսումնասիրվող պետության տնտեսաաշխարհագրական դիրքի ազդեցությունը նրա զարգացման վրա, զարգացման հիմնական ուղղությունները, տեղը և դերը համաշխարհային տնտեսության մեջ: ***Կարողանա գնահատել*** տնտեսաաշխարհա-

ծաշըրջանի բնական պայմաններին և ռեսուրսներին, բնակչությանն ու տնտեսությանը: ***Իմանա*** ուսումնասիրվող պետության տարածքի մեծությունը, բնակչության թիվը, պետական կարգը, մայրաքաղաքը, կարևոր բնական ռեսուրսները, տնտեսության գլխավոր ճյուղերը: ***Կարողանա թվարկել*** արտադրական և ոչ արտադրական ոլորտների, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ճյուղերը, ***բերել*** ըստ տնտեսական զարգացման՝ երկրների օրինակներ, **քարտեզի վրա ցույց** տալ ուսումնասիրվող պետությունը, մայրաքաղաքը, խոշոր քաղաքները, սահմանակից երկրները, գլխավոր հանքային ռեսուրսները, տարածաշրջանի և պետության աշխարհագրական գլխավոր օբյեկտները:	արտադրության նյութական և ոչ նյութական ոլորտները, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, գլխավոր ճյուղերը, դերը, տեղաբաշխումը, նրա վրա ազդող գործոնները, գյուղատնտեսության ճյուղային կազմը. բուսաբուծություն և անասնապահություն, տեղաբաշխումը, դրա վրա ազդող գործոնները, աշխարհի գյուղատնտեսության գլխավոր շրջանները, տրանսպորտի հիմնական տեսակները, դրանց նշանակությունը, տուրիզմի հիմնական շրջանները, միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերը, օվկիանոսի և ծովերի տնտեսական նշանակությունը, ուսումնասիրվող տարածաշրջանի բնական պայմանները, տնտեսության զարգացման նախադրյալները, բնակչության շարժը, կազմը և տեղաբաշխումը, տնտեսության մասնագիտացման ճյուղերը, տեղաբաշխումը, ուսումնասիրվող պետության բնական պայմանները, տնտեսության զարգացման նախադրյալները, բնակչության շարժը, կազմը և տեղաբաշխումը, տնտե-	գրական օբյեկտների աշխարհագրական դիրքը, օրինակներով ***բացատրել*** իր ապրելավայրի կլիմայի ազդեցությունը մարդու կյանքի, կենցաղի և տնտեսական գործունեության վրա, տնտեսության հիմնական ճյուղերի տեղաբաշխման սկզբունքները, օգտվելով ՏՀՏ-ներից ***պատրաստել*** հաղորդում ուսումնասիրվող պետության մասին, թեմատիկ քարտեզների, քարտեզասխեմաների, վիճակագրական աղյուսակների հիման վրա ***կատարել*** հետևություններ:

	սության մասնագիտացման ճյուղերը և տեղաբաշխումը, արտահանվող և ներմուծվող գլխավոր ապրանքատեսակները: ***Կարողանա բացատրել*** տնտեսության զարգացման նախադրյալները, տնտեսության տեղաբաշխման գործոնները, աշխատատար, էներգատար, ջրատար, նյութատար արտադրություններ, հողային ֆոնդ, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողահանդակներ հասկացությունները: ***Օգտվել*** տարածքի աշխարհագրական բնութագրման տիպային պլանից, վերլուծել թեմատիկ քարտեզներ, քարտեզասխեմաներ, վիճակագրական աղյուսակներ, քարտեզի վրա ***ցույց տալ*** արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ աշխարհի առավել զարգացած երկրները, տրանսպորտի առանձին տեսակներով աշխարհի առավել զարգացած երկրները, տուրիզմի համաշխարհային շրջանները և կենտրոնները:	

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ներկայացվող պահանջները արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Աշխարհագրության «Հասարակական աշխարհագրություն» և «Տարածաշրջանների աշխարհագրություն» դասընթացների ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի երկրագնդի բնական ռեսուրսերի սահմանափակությունը,
- մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը,
- գիտակցի տարբեր աշխարհամասերի, տարածաշրջանների, երկրների ժողովրդագրական ցուցանիշների փոփոխությունները և դրանց հետևանքները:
- կարևորի բնակչության կրթական մակարդակի շարունակական բարձրացման անհրաժեշտությունը՝ որպես պետության զարգացման գլխավոր երաշխիք,
- գիտակցի համաշխարհային տնտեսության՝ որպես փոխկապված միասնական համակարգի դերը յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության զարգացման գործում,
- գնահատի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հեռանկարները ուսումնասիրվող տարածաշրջաններում և պետություններում,
- գիտակցի աշխարհաճանաչողության մեջ աշխարհագրական մտածողության՝ տարածականության, համալիրայնության, գլոբայնության, կոնկրետության կարևորությունը՝ որպես օբյեկտիվ աշխարհի վերաբերյալ համակարգված և գիտական գիտելիքներ ձեռք բերելու անփոխարինելի միջոց:
- կարևորի բնակչության կենսապայմանների բարելավման գործում տնտեսության զարգացման նշանակությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարան

(բովանդակային միջուկ)

Հայաստան (Հայկական լեռնաշխարհ)

Հայաստանի տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը:

Բնությունը

Երկրաբանական կառուցվածքը: Սեյսմիկությունը, հրաբխականությունը: Օգտակար հանածոները: Ռելիեֆը, Լեռնագրական խոշոր միավորները. եզրային ծալքաբեկորավոր լեռներ, Միջնաշխարհ: Կլիման: Կլիմայի վերընթաց գոտիականությունը: Գետերը, լճերը, ստորերկրյա ջրերը: Հողերի, կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետություն, ԼՂՀ

Տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը: Վարչատարածքային բաժանումը:

Բնակչությունը: Բնակչության թիվը, շարժը, կազմը, աշխատանքային ռեսուրսները, տեղաբաշխումը, տարաբնակեցումը:

Տնտեսությունը, ճյուղային կառուցվածքը: Արդյունաբերություն: Ճյուղային կառուցվածքը, մասնագիտացումը, տեղաբաշխումը: Գյուղատնտեսություն: Ճյուղային կառուցվածքը, գլխավոր ճյուղերի զարգացումը և տեղաբաշխումը: Տրանսպորտ: Գլխավոր տեսակները, տրանսպորտային ցանցը: Ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի զարգացումը և տեղաբաշխումը:

Վարչատարածքային միավորների աշխարհագրական բնութագիրը: Բնօգտագործումը և բնապահպանությունը: Հատուկ պահպանվող տարածքները: ՀՀ կարմիր գրքերը: ՀՀ և ԼՂՀ տեղը աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը: Մասնակցությունը միջազգային կազմակերպություններին:

Հիմնական դպրոց **Սովորողներին ներկայացվող պահանջները** **Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ**		
Ա խումբ **պարտադիր նվազագույն մակարդակ**	**Բ խումբ** **միջին մակարդակ** **(ավելանում են Ա խմբի պահանջներին)**	**Գ խումբ** **առավելագույն մակարդակ** **(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)**
Իմանա Հայաստանի (Հայկական լեռնաշխարհի) տարածքի մեծությունը, սահմանները և աշխարհագրական դիրքը: ***Կարողանա*** քարտեզի վրա ցույց տալ Հայաստանի տարածքը և սահմանները : ***Իմանա*** հայտնի երկրաշարժերը և հրաբուխները, լեռնագրական գլխավոր միավորները, ընդերքի գլխավոր հարստությունները, կլիման ձևավորող գլխավոր գործոնները, ջրագրական գլխավոր օբյեկտները, ՀՀ գլխավոր հողատիպերը, հիմնական լանդշաֆտային գոտիները: ***Կարողանա*** քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի լեռնագրական գլխավոր միավորները, Հայկական լեռնաշխարհի գլխավոր գետերը և լճերը:	***Իմանա*** ՀՀ տարածքի ձևավորման երկրաբանական առանձնահատկությունները, կլիմայի բնորոշ գծերը, տարվա եղանակների բնութագիրը, ջրաբանական առանձնահատկությունները, ջրային ռեսուրսները: Հողային ծածկի, բուսական ծածկի, կենդանական աշխարհի հիմնական առանձնահատկությունները, բնական պայմանների վերընթաց գոտիականությունը: ***Կարողանա*** բացատրել ՀՀ հողաբուսական ծածկի առանձնահատկությունները, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ օգտակար հանածոների գլխավոր հանքավայրերը, ՀՀ գլխավոր գետերը, լճերը, ջրամբարները, գլխավոր հողատիպերի տարածման շրջանները, բուսական ու կենդանական տեսակների տարածման շրջանները:	***Իմանա*** ջերմության և խոնավության բաշխման օրինաչափությունները, ջրային հաշվեկշիռը: ***Կարողանա*** քարտեզի վրա ցույց տալ և բնութագրել լանդշաֆտային գոտիները, օդերևութաբանական տվյալների հիման վրա կազմել ջերմաստիճանի օրական և տարեկան ընթացքի կորերը:
Կարողանա թվարկել և քարտեզի վրա ***ցույց***	***Իմանա*** ՀՀ վարչատարածքային կառուց-	***Իմանա*** Հայաստանի առաջին հանրապե-

տալ ՀՀ մարզերը և մարզկենտրոնները:	վածքը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման միավորները:	տության պետական տարածքի և սահմանների ձևավորումը, այն հիմնական միջազգային և ռեգիոնալ կազմակերպությունները, որոնց անդամակցում է ՀՀ: ***Կարողանա բացատրել*** Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հիմնախնդիրը:
Իմանա ՀՀ բնակչության թվաքանակը, փոփոխությունները, բնական աճի ցուցանիշները, բնակչության թվի դինամիկան Ուրբանիզացման մակարդակը, գլխավոր քաղաքները: ***Կարողանա*** քարտեզի վրա ***ցույց տալ*** հայկական համայնքները, թվարկել և քարտեզի վրա ցույց տալ հայաշատ պետությունները և խոշոր քաղաքները:	***Իմանա*** բնակչության ազգային կազմի փոփոխությունները, արտագաղթի և ներգաղթի առանձնահատկությունները, հայկական սփյուռքի ձևավորման պատճառները, ՀՀ բնակչության կազմը, աշխատանքային ռեսուրսները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, միգրացիայի գլխավոր ուղղությունները, տարաբնակեցման առանձնահատկությունները, քաղաքների դասակարգումը, Երևան քաղաքի աշխարհագրական բնութագիրը: ***Կարողանա բացատրել*** բնակչության բնական աճի փոփոխման պատճառները, բնակչության արտագաղթի և ներգաղթի պատճառները, քարտեզի վրա ***ցույց տալ*** Հայաստանի խտաբնակ մարզերը:	***Իմանա*** տնտեսապես ակտիվ բնակչությունը ըստ տարբեր ցուցանիշների, բնակչության զբաղվածության հիմնախնդրի էությունը, իր բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները: ***Կարողանա*** վիճակագրական տվյալների հիման վրա կազմել բնակչության շարժընթացի գրաֆիկ, ***բացատրել*** բնակչության խտության փոփոխությունները վերընթաց ուղղությամբ:

Իմանա տնտեսության ճյուղային կառուցվածքը, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, ագրոարդյունաբերական համալիրի կազմը, ընդհանուր բնութագիրը, գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքը, հողաբարելավման տեսակները, բուսաբուծության կառուցվածքը, մասնագիտացման ճյուղերը, անասնապահության ճյուղերը:***Կարողանա*** թվարկել և քարտեզի վրա ցույց տալ գլխավոր էլեկտրակայանները, լեռնահանքային, մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական, շինանյութերի արդյունաբերության կենտրոնները, թվարկել և ցույց տալ խոշոր ջրամբարները, ջրանցքները:	***Իմանա*** ՀՀ և ԼՂՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը, տնտեսության զարգացման բնական նախադրյալները, արդյունաբերության մասնագիտացման ճյուղերը, վառելիքաէներգետիկ բազայի առանձնահատկությունները, արդյունաբերության առաջատար ճյուղերի (մետալուրգիական, քիմիական, մեքենաշինական, շինանյութերի, թեթև, սննդի, տեղեկատվական տեխնոլոգիաների, փայտամշակման, ոսկերչության, ադամանդագործության) զարգացման բնական և տնտեսական նախադրյալները, գյուղատնտեսական հողահանդակների կազմը, հողաբարելավման, ոռոգման համակարգի առանձնահատկությունները, բուսաբուծության տեղաբաշխման առանձնահատկությունները, տեղը գյուղատնտեսական արտադրության ծավալում, անասնապահության տեղաբաշխման առանձնահատկությունները, տեղը գյուղատնտեսական արտադրության ծավալում, կերային բազայի առանձնահատկությունները:	***Իմանա*** ՀՀ և ԼՂՀ տնտեսության առանձնահատկությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում (նախախորհրդային, խորհրդային, հետխորհրդային), տնտեսական քաղաքական նախադրյալները, արդյունաբերության տեղաբաշխման առանձնահատկությունները: ***Կարողանա*** օգտվելով վիճակագրական տվյալներից՝ ***կազմել*** տնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող դիագրամներ, կատարել տնտեսական բնույթի որոշակի հաշվարկներ հումքի, էներգակիրների սպառման վերաբերյալ, գրաֆիկորեն ***պատկերել*** տնտեսության և նրա տարբեր ճյուղերի կառուցվածքը:

Իմանա տրանսպորտի հիմնական տեսակները, ուղիները, սպասարկման ոլորտի գլխավոր ճյուղերը, արտահանվող և ներկրվող հիմնական ապրանքները, ՀՀ առևտրական գլխավոր գործընկերները :	***Իմանա*** տրանսպորտային դիրքի առանձնահատկությունները, արտաքին տրանսպորտային կապերը, արտաքին և ներքին փոխադրումները, տուրիզմի զարգացման նախադրյալները և կարևորությունը,	***Իմանա*** բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալը ըստ տրանսպորտի գլխավոր տեսակների: Արտաքին առևտրի հաշվեկշիռը, շրջանառությունը, արտահանման և ներկրման գլխավոր ուղղությունները:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ներկայացվող պահանջները արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Կարևորի Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան և հայ ժողովրդի հայրենիք,
- գիտակցի Հայաստանի աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից բխող առավելությունները և սահմանափակումները և դրա վերաբերյալ ունենա սեփական դիրքորոշում,
- գիտակցի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հան-րապետությունների ներկայիս տարածքի և ընդհան-րապես Հայկական լեռնաշխարհի բնառեսուրսային, բնապատմական, հոգևոր-գեղագիտական արժեքը,
- գնահատի ՀՀ և ԼՂՀ տնտեսության զարգացման բնական և հասարակական-արտադրական ներուժը և հեռանկարները,
- գիտակցի իր հայրենիքի բնառեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման, պահպանության և վերականգնման կարևորությունը:

Գրականության ցանկ

1. Աշխարհագրություն-6, Ա.Գրիգորյան, Ա.Հովսեփյան, «Աստղիկ Գրատուն», 2007 թ.
2. Աշխարհագրություն-6, Մ. Իսկանդարյան, «Լույս», 2007թ.
3. Աշխարհագրություն-7, Լ.Վալեսյան... «Մակ.-Արմենիա», 2007 թ.
4. Աշխարհագրություն-7, Ռ. Մարգարյան... «Արևիկ», 2007 թ.
5. Աշխարհագրություն-8, Ռ. Մարգարյան, Ս. Օհանյան, «Արևիկ», 2008 թ.
6. Աշխարհագրություն, Ա. Ավագյան, Մ. Թորոսյան, Ա. Հովսեփյան, «Մակմիլան-Արմենիա», 2008 թ.
7. Հայաստանի աշխարհագրություն-9, Լ. Վալեսյան, Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան), «Մակմիլան-Արմենիա», 2009 թ.
8. Հայաստանի աշխարհագրություն-9, Ա. Խոյեցյան, Գ. Մկրտչյան, «Արևիկ» , 2009 թ.
9. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ, 7-8-րդ դասարաններ, Ռ.Մարգարյան և ուրիշ., «Արևիկ», 2000 թ.
10. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 6-րդ դասարանի համար, Ա.Հովսեփյան, Ա.Գրիգորյան, «Աստղիկ Գրատուն», 2007 թ.
11. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 7-8-րդ դասարանի համար, Ա.Հովսեփյան, Գ.Հովհաննիսյան, «Մակմիլան-Արմենիա», 2007 թ.
12. Աշխարհագրություն. Ուսուցչի ձեռնարկ 7-8-րդ դասարանի համար Ռ. Մարգարյան, Ս.Օհանյան, «Արևիկ» , 2007 թ.
13. Հայաստանի աշխարհագրություն, Ուսուցչի ձեռնարկ, 9-րդ դասարան հեղ. Մ. Ա. Հովսեփյան, Մանասյան, «Մակմիլան-Արմենիա», 2009 թ.
14. Հայաստանի աշխարհագրություն, Ուսուցչի ձեռնարկ (9-րդ դասարան, հեղինակներ՝ Ա. Խոյեցյան, Գ. Մկրտչյան), «Արևիկ», 2009 թ.
15. Մ. Մելքումյան, Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն: Եր., 1999
16. Հանրակրթության պետական կրթակարգ, Հանրակրթության պետական չափորոշիչ,
17. Հ. Գաբրիելյան, Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000:

18. Աշխարհագրություն-6, աշխարհագրական ատլաս, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2008
19. Աշխարհը և Հայաստանը, աշխարհագրական ատլաս, «Մակմիլան-Արմենիա», 2004:
20. Հանրակրթական դպրոցի Աշխարհագրություն առարկայի 6-9-րդ դասարանի ծրագիր, Եր.2006:
21. Максаковский В. П. “Географическая культура”, М. “Владос”, 1998
22. И.В. Душина”Программа по географии”, Москва, 2006
23. ”Школа 2100”. Образовательная программа и пути ее пеализации. Выпуск М.,Баласс, 1999
24.www.ed.gov/pdf файл-Государственный стандарт общего образования.
25. www.ed.gov/pdf файл-О преподовании предмета “География” в условиях введения государственного стандарта общего обраования.

ԾՐԱԳՐԵՐ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Բացատրագիր

Հանրակրթական դպրոցում համակարգված, ամբողջական և անընդհատ աշխարհագրական կրթությունը սկսվում է 6-րդ դասարանի «Աշխարհագրական թաղանթ: Մայրցամաքներ և օվկիանոսներ» դասընթացով: Դասընթացով խորացվում է Երկիր մոլորակի և դրա աշխարհագրական թաղանթի ուսումնասիրությունը, բայց արդեն ըստ մակերևույթի խոշոր միավորների՝ մայրցամաքների և օվկիանոսների: Տարբեր տարածքների բնության կոնկրետ նկարագրությունների շնորհիվ սովորողների մեջ նախ ձևավորվում են պատկերացումներ բնական համալիրների (հասարակածից-բևեռներ և լեռների ստորոտից գագաթը ուղղությամբ) մասին, ապա տրվում է բնական այդ և մի շարք այլ երևույթների բացատրությունները:

Դասընթացը կրում է աշխարհագրական, երկրագիտական - երկրագրական բնույթ: Երկրի յուրաքանչյուր մայրցամաքի և Համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրման ժամանակ տրվում է ոչ միայն բնության, այլև բնակչության և նրա տնտեսական գործունեության նկարագիրը:

7-8-րդ դասարաններում ուսումնասիրվելու է «Աշխարհագրություն» առարկայի համապատասխանաբար «Հասարակական աշխարհագրություն. Աշխարհ» և «Հասարակական աշխարհագրություն. Տարածաշրջաններ» դասընթացները: Դասընթացները կոչված են ամբողջական ու խոր գիտելիքներ տալու աշխարհի, դրա տարածաշրջանների ու առանձին պետությունների բնության, բնակչության և տնտեսության մասին: Դասընթացներում քննության են առնվում նաև բնական պայմանների և ռեսուրսների տնտեսական գնահատման, պետությունների ու ժողովուրդների քաղաքական, սոցիալական ու մշակութային զարգացման հարցերը:

Ուսումնասիրելով հասարակության տարածքային կազմակերպումը, աշխարհի տարածաշրջաններն ու գլխավոր պետությունները աշակերտները ստանում են տնտեսագիտական, ազգագրական ու քաղաքական լրացուցիչ գիտելիքներ:

Հատուկ ուշադրություն է հատկացվել ՀՀ անմիջական հարևաններին և այն հեռավոր երկրներին, որտեղ կան ձևավորված հայկական համայնքներ և որոնց հետ

տնտեսական, մշակութային ու քաղաքական սերտ կապերը մեզ համար ունեն առաջնային նշանակություն:

9-րդ դասարանում կուսումնասիրվի «Հայաստանի աշխարհագրություն» դասընթացը: Դասընթացի կարևորագույն նպատակն է դպրոցականին՝ ապագա պետական ու հասարակական գործչին, ճարտարագետին ու ֆերմերին, բանվորին ու առևտրականին հաղորդել բազմակողմանի ու համակարգված գիտելիքներ պատմական Հայաստանի սահմանների, բնության, ՀՀ բնական պայմանների ու հարստությունների, բնակչության ու տնտեսության, հասարակության այսօրվա կյանքի, արտաքին ու ներքին տնտեսական կապերի, հեռանկարային զարգացման հնարավորությունների, ժամանակակից աշխարհում նրա տեղի ու դերի մասին:

Դասընթացն ունի հայրենագիտական ուղղվածություն և կոչված է Հայաստանն ուսումնասիրել որպես մեկ բնապատմական, ազգային-պետական ու տնտեսական-մշակութային ամբողջություն, որպես հայերի բնօրրան ու հայրենիք:

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացը կոչված է լրացնելու ՀՀ հանրակրթական դպրոցի աշակերտների տարածաշրջանաաշխարհագրական, ինչպես նաև հայագիտական ու հայրենագիտական գիտելիքները՝ ճանաչելի դարձնելով սեփական հայրենիքի աշխարհագրական առանձնահատկությունները, զարգացնելու շրջակա միջավայրի և այնտեղ ընթացող բնական ու հասարակական երևույթների բազմաբնույթ կապերը, դիտարկելու, վերլուծելու և գնահատելու որոշակի կարողություններ:

Դասընթացը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության մեջ ավելի մոտ ու մատչելի տարածական երևույթների օրինակով խորացնել աշակերտների ընդհանուր աշխարհագրական պատկերացումները և կարողությունները:

ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6-րդ դասարան

(34 ժամ, շաբաթական 1 ժամ)

Աշխարհագրական թաղանթ: Մայրցամաքներ և օվկիանոսներ

<u>Թեմա - Աշխարհագրական թաղանթ: Մարդն աշխարհագրական թաղանթում</u> **5 ժամ**

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել աշխարհագրական թաղանթի զարգացմանը, նրա գոտիական բաժանմանը, բնական և մարդածին լանդշաֆտների ձևավորմանը, բնութագրել երկրագնդի հիմնական բնական զոնաները, ներկայացնել վերընթաց գոտիականության առաջացման պատճառները:

Թեմայի բովանդակությունը

Աշխարհագրական թաղանթ, կառուցվածքը, հատկանիշները, զարգացումը: Երկրագնդի խոշոր պլատֆորմներն ու գեոսինկլինալային շրջանները: Կլիմայական գոտիներ: Աշխարհագրական գոտիականություն, զոնայականություն, առանձնացման սկզբունքները: Հորիզոնական (լայնակի) զոնայականություն, վերընթաց գոտիականություն, առաջացման պատճառները: Երկրագնդի հիմնական բնական զոնաները, դրանց աշխարհագրական տարածումը:

<u>Թեմա - Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն</u> 29 ժամ

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել մայրցամաքների և օվկիանոսների բնությանը, ցույց տալ դրանց հայտնագործման և յուրացման, աշխարհագրական դիրքի, բնական օբյեկտների և երևույթների տեղաբաշման և տարածման առանձնահատկությունները :

Թեմայի բովանդակությունը

Ենթաթեմա - Ի՞նչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը *1 ժամ*

«Մայրցամաք», «աշխարհամաս», «օվկիանոս» հասկացությունները:

Ենթաթեմա - Աֆրիկա *3 ժամ*

Աշխարհագրական դիրքը: Ափերը ողողող օվկիանոսները և ծովերը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը:

Կլիման, Կլիմայական գոտիները և մարզերը: Գետերը և լճերը:

Բնական զոնաները: Սավաննաներ: Անապատներ և կիսաանապատներ:

Ենթաթեմա-Ավստրալիա *2 ժամ*

Աշխարհագրական դիրքը և ափերի գծագրությունը: Մակերևույթը:

Կլիման: Կլիմայական գոտիները, մարզերը: Գետերը, լճերը:

Բնական զոնաները: Բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները:

Գործնական աշխատանք *1 ժամ*

Ենթաթեմա-Անտարկտիդա *1* ***ժամ***

Աշխարհագրական դիրքը, ափագիծը: Անտարկտիդայի ժամանակակից հետազոտությունները: Սառցածածկույթը և մակերևույթը: Կլիման, օրգանական աշխարհը:

Ենթաթեմա - Հարավային Ամերիկա *3 ժամ*

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը:

Կլիման: Կլիմայական գոտիները, մարզերը: Գետերը և լճերը:

Բնական զոնաները. խոնավ հասարակածային անտառներ: Վերընթաց գոտիականությունը Անդերում:

Ենթաթեմա- Հյուսիսային Ամերիկա *3 ժամ*

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Մակերևույթը:

Կլիման: Կլիմայական գոտիները և մարզերը: Գետերը և լճերը:

Բնական զոնաները, տարածման առանձնահատկությունները: Արկտիկական անապատներ, տունդրա:

Գործնական աշխատանք *1 ժամ*

Ենթաթեմա-Եվրասիա *8 ժամ*

Աշխարհագրական դիրքը: Ափերի գծագրությունը: Ափերը ողողող օվկիանոսները և ծովերը:

Երկրաբանական կառուցվածքը և մակերևույթը: Խոշոր Հարթավայրերը և լեռները: Երկրաշարժերի և հրաբուխների շրջանները:

Կլիման, կլիմագոյացնող գործոնները: Կլիմայական գոտիները և մարզերը:

Գետերը և լճերը. Հյուսիսային սառուցյալ, Ատլանտյան, Խաղաղ, Հնդկական օվկիանոսների և ներքին հոսքի ավազանների գետերն ու լճերը:

Բնական զոնաները. դրանց հերթափոխությունը: Բարեխառն գոտու անտառներ: Անտառատափաստաններ և տափաստաններ: Վերընթաց գոտիականությունը:

Ենթաթեմա-Օվկիանոսներ *2 ժամ*

Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսների աշխարհագրական դիրքը, ափագիծը, բնական պայմանները, ջրաբանական ռեժիմը: Օրգանական աշխարհը և մյուս հարստությունները:

Պահուստային՝ **4 ժամ,**

որը պետք է օգտագործվի թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների համար:

ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրություն

Մաս 1. Աշխարհ

7-րդ դասարան

(Շաբաթական 1 ժամ, ընդամենը՝ 34 ժամ)

Թեմա - Ներածություն ***1 ժամ***

Կրթական հիմնական խնդիրները

Դասընթացի տեղը դպրոցական աշխարհագրության համակարգում:

Թեմայի բովանդակությունը

Հասարարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության ուսումնասիրման առարկան, հիմնական խնդիրները և գործնական նշանակությունը:

Թեմա - Աշխարհի քաղաքական բաժանումը ***3 ժամ***

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել աշխարհի քաղաքական-տարածքային բաժանմանը, պետությունների պետությունների խմբավորումներին և տիպաբանությանը:

Թեմայի բովանդակությունը

Աշխարհի քաղաքական բաժանումը: Քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը: Պետությունների խմբավորումը ըստ տարածքի մեծության, բնակչության թվի, աշխարհագրական դիրքի,

Պետությունների խմբավորումը ըստ կառավարման ձևի, վարչատարածքային կառուցվածքի, զարգացման մակարդակի:

Թեմա - Աշխարհի բնակչության աշխարհագրությունը ***6 ժամ***

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել բնակչության ուսումնասիրման աշխարհագրական տեսանկյուններին:

Թեմայի բովանդակությունը

Գաղափար բնակչության մասին: Աշխարհի բնակչության թիվը, թվաքանակի շարժընթացը:

Բնակչության բնական շարժը: Բնակչության վերարտադրություն:

Բնակչության մեխանիկական շարժ (միգրացիա, գաղթ), տեսակները, պատճառները: Արդի միգրացիոն շարժերի ուղղությունները:

Ժողովրդագրական քաղաքականություն: Աշխարհի բնակչության կազմը. սեռային, տարիքային, ռասսայական, լեզվական, ազգային (էթնիկական), կրոնական: Աշխատանքային ռեսուրսներ:

Բնակչության տարաբնակեցում. քաղաքային և գյուղական: Աշխարհի խոշոր քաղաքները:

Գործնական աշխատանք ***1 ժամ***

Թեմա - Բնական պայմաններ և ռեսուրսներ ***2 ժամ***

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել բնական պայման և բնական ռեսուրս հասկացությունների բովանդակությանը, բնական ռեսուրսների տարբեր տեսակներին և խմբերին, տարբեր բնական ռեսուրսներով աշխարհի բնակչության ապահովվածությանը:

Թեմայի բովանդակությունը

Բնական պայմաններ և բնական ռեսուրսներ, տեսակները և խմբերը:

Աշխարհի բնական ռեսուրսները, դրանց տեղաբաշխումը, ռեսուրսաապահովվածություն:

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել ազգային և համաշխարհային տնտեսությանը և դրանց զարգացման և տեղաբաշխման օրինաչափություններին:

Թեմա - Տնտեսություն: Համաշխարհային տնտեսությունը ***16 ժամ***

Թեմայի բովանդակությունը

Գաղափար տնտեսության մասին:

Տնտեսության զարգացման գործոնները:

Համաշխարհային տնտեսություն. ձևավորման նախադրյալները, զարգացման փուլերը: Տնտեսության ոլորտները, ճյուղերը: Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը:

Աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում:

Միջազգային տնտեսական համագործակցություն:

Աշխարհի արդյունաբերությունը, ճյուղային կառուցվածքը, գլխավոր ճյուղերը, տեղաբաշխումը:

Արդյունահանող և վերամշակող արդյունաբերություն:

Գիտատար, նյութատար, աշխատատար, էներգատար և ջրատար արտադրություն:

Աշխարհի գյուղատնտեսությունը. աշխարհի հողային ֆոնդը: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը: Բուսաբուծություն, անասնապահություն, տեղաբաշխումը: Աշխարհի տրանսպորտը և կապը, դերը աշխատանքի աշխարհագրական բաժանման և հասարակության զարգացման գործում:

Միջազգային տրանսպորտային ուղիները, նեղուցները, ջրանցքները:

Տնտեսության սպասարկման ոլորտ. ճյուղային կառուցվածքը, կապը նյութական արտադրության հետ: Տուրիզմ, համաշխարհային շրջանները և կենտրոնները:

Միջազգային տնտեսական հարաբերությունները:

Արտաքին առևտուր:

Հայաստանի Հանրապետությունն աշխարհում:

Գործնական աշխատանք ***1 ժամ***

Պահուստային՝ ***4 ժամ,***

որը պետք է օգտագործվի թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների համար:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրություն

Մաս 2. Տարածաշրջաններ

8-րդ դասարան

(Շաբաթական 2 ժամ, ընդամենը՝ 68 ժամ)

ԵՎՐԱՍԻԱ

Թեմա - Ներածություն: Եվրասիայի հասարակական-աշխարհագրական բաժանումը

1 ժամ

Թեմա - Եվրոպա 22 ժամ

Արևելյան Եվրոպա[1]. ընդհանուր բնութագիրը **3 ժամ**

Աշխարհագրական դիրքը, սահմանները: Բնական պայմանները և ռեսուրսները: Կազմը և քաղաքական քարտեզը, տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները:

Բնակչությունը, թիվը, շարժը, կազմը, տեղաբաշխումը:

Տարածաշրջանի տնտեսության բնութագիրը, տեղը համաշխարհային տնտեսության և քաղաքակրթության մեջ: Տարածաշրջանի հիմնախնդիրները:

Ռուսաստանի Դաշնություն[2]**:** **5 ժամ**

Աշխարհագրական դիրքը, սահմանները, բնական պայմանների և ռեսուրսների ընդհանուր բնութագիրը, պետական կարգը, վարչաքաղաքական բաժանումը:

Բնակչությունը. բնակչության շարժը, կազմը, տեղաբաշխումը, աշխատանքային ռեսուրսները:

Տնտեսությունը. ճյուղային կառուցվածքը: Արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, դրանց տեղաբաշխումը: Երկրի տեղը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման համակարգում: Երկրի ավանդը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

---

[1] Մյուս տարածաշրջանները ներկայացվում են նույն սխեմայով:

[2] Մյուս պետությունները ներկայացվում են նույն սխեմայով:

Հարավային Եվրոպա. ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Իտալիա: **1 ժամ**

Արևմտյան Եվրոպա: ընդհանուր բնութագիրը **3 ժամ**

Գերմանիա: **2 ժամ**

Ֆրանսիա: **2 ժամ**

Մեծ Բրիտանիա: **2 ժամ**

Հյուսիսային Եվրոպա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Գործնական աշխատանք ***1 ժամ***

Թեմա- Ասիա ***23 ժամ***

Հարավարևմտյան Ասիա: Ընդհանուր բնութագիրը **3 ժամ**

Վրաստան: **2 ժամ**

Ադրբեջան: **2 ժամ**

Թուրքիա: **2 ժամ**

Իրան: **2 ժամ**

Կենտրոնական Ասիա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Հարավային Ասիա: Ընդհանուր բնութագիրը **1 ժամ**

Հնդկաստան: **2 ժամ**

Հարավարևելյան Ասիա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Արևելյան Ասիա: Ընդհանուր բնութագիրը **1 ժամ**

Չինաստան: **2 ժամ**

Ճապոնիա: **2 ժամ**

Թեմա-Աֆրիկա **3 ժամ**

Աֆրիկա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Հարավաֆրիկյան Հանրապետություն: **1 ժամ**

Գործնական աշխատանք **1 ժամ**

Թեմա-Ավստալիա և Օվկիանիա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

Թեմա-Ամերիկա ***8 ժամ***

Հյուսիսային Ամերիկա: Ընդհանուր բնութագիրը **2 ժամ**

ԱՄՆ: 3 ժամ

Լատինական Ամերիկա: Ընդհանուր բնութագիրը 3 ժամ

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել տարածաշրջանների, պետությունների աշխարհագրական դիրքի, բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության առանձնահատկություններին:

Պահուստային՝ 8 ժամ, որը պետք է օգտագործվի թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների համար:

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարան

(Շաբաթական 2 ժամ՝ ընդամենը 68-ժամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կրթական հիմնական խնդիրները

Ծանոթացնել Հայկական լեռնաշխարհի, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական դիրքին, բնական պայմաններին ու ռեսուրսներին, ցույց տալ բնակչության և տնտեսության տեղաբաշխման ու տարածքային կազմակերպման առանձնահատկությունները, բացահայտել նրանց բնության և տնտեսության ներքին տարբերությունները:

Թեմա- Հայկական լեռնաշխարհի բնությունը 7 ժամ

Թեմայի բովանդակությունը

Հայաստանն աշխարհի քարտեզում. սահմանները, աշխարհագրական դիրքը:

Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքը: Սեյսմիկությունը և հրաբխականությունը:

Ռելիեֆի հիմնական ձևերը. եզրային լեռների համակարգ:

Միջնաշխարհ (Հայկական բարձրավանդակ):

Միջլեռնային գոգավորություններ:

Կլիման: Ներքին ջրերը. խոշոր գետերը, լճերը, ստորերկրյա ջրերը, սառցադաշտերը:

Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թեմա- Ընդհանուր ակնարկ 2 ժամ

Թեմայի բովանդակությունը

Տարածքը, սահմանները: Աշխարհագրական դիրքը. ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական, վարչատարածքային բաժանումները:

Ժամանակակից վարչատարածքային կառուցվածքը:

Թեմա - Բնությունը 14 ժամ

Թեմայի բովանդակությունը

Երկրաբանական կառուցվածքը:

Օգտակար հանածոները. մետաղային, ոչ մետաղային: Հանքային ջրեր:

Ռելիեֆը: Լեռնագրական մարզերը. Հյուսիսային և Հարավային ծալքաբեկորավոր լեռների ու միջլեռնային գոգավորությունների մարզերը:

Հրաբխային լեռնավահանների և սարավանդների, Միջինարաքսյան գոգավորության մարզերը:

Կլիման: Կլիմայի վերընթաց գոտիականությունը: Կլիմայի ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության վրա:

Ներքին ջրերը, ջրային հաշվեկշիռը:

Գետերը, գետային ավազանները (Արաքսի, Կուրի): Գետերի սնումը և ռեժիմը, գետերի հիմնական հատկանիշները: Գլխավոր գետերը, դրանց նշանակությունը:

Լճերը, դրանց ծագումը: Սևանա լիճ: Լճերի օգտագործումը: Ջրամբարները, դրանց նշանակությունը: Արտեզյան ավազաններ:

Հողային ծածկույթը: Հողերի հիմնական տիպերը և դրանց օգտագործումը: Բուսականությունը, դրա բազմազանությունը և պատճառները: Բուսածածկույթի օգտագործումը:

Կենդանական աշխարհը, բազմազանությունը, պատճառները: Վերընթաց լանդշաֆտային գոտիականությունը:

Թեմա - Բնակչությունը 5 ժամ

Թեմայի բովանդակությունը

Թիվը, շարժընթացը: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը, կազմը. ազգային, սեռատարիքային, կրոնական: Աշխատանքային ռեսուրսներ: Բնակչության տեղաբաշխումը, դրա վրա ազդող գործոնները: Տարաբնակեցումը:

Քաղաքային և գյուղական տարաբնակեցում:

Խոշոր քաղաքները: Մայրաքաղաք Երևանի աշխարհագրական բնութագիրը:

Գործնական աշխատանք 1 ժամ

Թեմա – Տնտեսության ընդհանուր բնութագիրը 1 ժամ

Թեմայի բովանդակությունը

Տնտեսության զարգացման նախադրյալները, ճյուղային և տարածքային կառուցվածքը:

Թեմա - Արդյունաբերությունը 7 ժամ

Թեմայի բովանդակությունը

Ընդհանուր բնութագիրը, ճյուղային և տարածքային կառուցվածքը:

Վառելիքաէներգետիկ համալիր. կազմը, հաշվեկշիռը:

Մետալուրգիա. զարգացման նախադրյալները, հումքային բազան, ենթաճյուղերը, տեղաբաշխումը:

Մեքենաշինություն. զարգացման նախադրյալները, գլխավոր ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Բարձր տեխնոլոգիաներ:

Քիմիական արդյունաբերություն. զարգացման նախադրյալները, հումքային բազան, գլխավոր ենթաճյուղերը, տեղաբաշխումը:

Թեթև արդյունաբերություն: Սննդի արդյունաբերություն. զարգացման նախադրյալները, ենթաճյուղերը, տեղաբաշխումը:

Շինանյութերի արդյունաբերություն. հումքային բազան, ենթաճյուղերը, տեղաբաշխումը: Արդյունաբերության մյուս ճյուղերը. ապակու և հախճապակու, փայտամշակման և այլն:

Թեմա - Գյուղատնտեսությունը 4 ժամ

Թեմայի բովանդակությունը

Ընդհանուր բնութագիրը, գլխավոր ճյուղերը:

Հողային ֆոնդը, առանձնահատկությունները, կառուցվածքը: Հողաբարելավում, դրա եղանակները:

Բուսաբուծություն, ենթաճյուղերը, տեղաբաշխումը:

Անասնապահություն, զարգացման նախադրյալները, գլխավոր ենթաճյուղերը: տեղաբաշխումը:

Գործնական աշխատանք 1 ժամ

Թեմա - Տրանսպորտ 2 ժամ

Թեմայի բովանդակությունը

Ընդհանուր բնութագիրը, գլխավոր տեսակները: ՀՀ տրանսպորտի գլխավոր ցուցանիշները. ցանցի խտություն, բեռնաշրջանառություն, ուղևորաշրջանառություն: Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային, և տրանսպորտի այլ ճյուղերի տեղաբաշխումը:

Թեմա- Տնտեսության ոչ արտադրական (սպասարկման) ոլորտը 3 ժամ

Ընդհանուր բնութագիրը: Գլխավոր ենթաճյուղերը: Զբոսաշրջություն. զարգացման նախադրյալները, հեռանկարները:

Թեմա- Բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները,

2 ժամ

Հատուկ պահպանվող տարածքներ. ազգային պարկեր, արգելոցներ, արգելավայրեր: ՀՀ Կարմիր գրքերը:

Թեմա - Զարգացման ներքին տարբերությունները 10 ժամ

Վարչական մարզերը: Մարզի համալիր աշխարհագրական բնութագիրը. աշխարհագրական դիրքը, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը:

Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ:

Թեմա - Հայաստանի Հանրապետությունը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում: Արտաքին տնտեսական կապերը 1 ժամ

Թեմա-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 3 ժամ

Ընդհանուր բնութագիրը, պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, կարգավիճակը: Բնությունը: Բնակչությունը: Տնտեսությունը:

Պահուստային՝ 5 ժամ, որը պետք է օգտագործվի թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների համար:

Աշխարհատեղեկատվական ուսումնական համակարգերի (GIS) և բնական ու հասարակական աշխարհագրության վերաբերյալ ինտերնետային կայքերի հասցեներ աշակերտների և աշխարհագրության ուսուցիչների համար

http://www.ncgia.ucsb.edu/cctp/ncgia.html - NCGIA

http://www.ncgia.ucsb.edu/giscc/units/u159/u159_f.html.

http://www.geo.ed.ac.uk/home/gishome.html - Edinburgh University

http://www.geog.le.ac.uk/cti - Computer in Teaching Geography Centre, UK

http://www.ncgia.ucsb.edu/education/curricula/giscc/units/format/outcomes.html

http://www.ncgia.ucsb.edu/education/curricula/giscc/units/format/outcomes.html - Maine, USA

http://libraries.maine.edu/Spatial/gisweb/spatdb/gis-lis/gi94070.html

http://www.kingston.ac.uk/gis/gis_for_teachers/curriculum.htm - Kingston, UK

http://gis.esri.com/library/userconf/educ03/p5098.pdf - Australia

National Geographic: MapMachine
Weatherbase

Emory University: Odyssey Online—Greece
ThinkQuest: Ancient Greece
University of Pennsylvania: Worlds Intertwined—Etruscans, Greeks, and Romans

National Geographic: Xpeditions Activity—Ancient Greece

Teaching and learning GIS in laboratories.

http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateld eq main]/@id=3450&POS[@stateld eq note]/@id=3450

http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateld eq main]/@id=3252&POS[@stateld eq note]/@id=3252

http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateld eq main]/@id=3487&POS[@stateld eq note]/@id=3487

http://www.nc.uk.net/webdav/servlet/XRM?Page/@1d=6001&Session/@id=D5tUMAqvYc22VM76mHQks&POS[@stateld eq main]/@id=3276&POS[@stateld eq note]/@id=3276

http://www.nc.uk.net/nc resources/entitlements/history_ent.htm

http://www.qca.org.uk/ca/5-14/revised2000/edprim2a.asp

http://www.qca.org.uk/ca/5-14/revised2000/edprim2b.asp

http://www.nc.uk/webdav/servlet/XRM?Page/@id=6001&Session/@id=D_5tUM..

www.armenica.org/

www.encyclopedia.com/html/section/armenia_history.asp

www.encarta.msn.com/encnet/features/onthisday.aspx